ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

14 մարտ, 2024 թվականի № 19-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ԳԱՐԵԳԻՆ ԽՈՒՄԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 88-րդ հոդվածի 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանրային հեռարձակողի խորհուրդը հանդիսանում է «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) կառավարման մարմինը և Հանրային հեռարձակողի խորհրդին են վերապահված Ընկերության հիմնադրի անունից հանդես եկող լիազորված մարմնի իրավասությունները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Լուծել Գարեգին Խումարյանի և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության միջև 2019 թվականի ապրիլի 9-ին կնքված թիվ 15 աշխատանքային պայմանագիրը դրա ժամկետը լրանալու պատճառով:
2. Գարեգին Խումարյանի և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության միջև 2019 թվականի ապրիլի 9-ին կնքված թիվ 15 աշխատանքային պայմանագիրը համարել լուծված 2024 թվականի ապրիլի 9-ից:
3. 2024 թվականի ապրիլի 9-ից մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հանրային հեռարձակողի խորհրդի կողմից Ընկերության գործադիր տնօրենի նշանակման օրն ընկած ժամանակահատվածի համար Ընկերության գործադիր տնօրենի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձ նշանակել Ընկերության գործադիր տնօրենի տեղակալ-ֆինանսական տնօրեն Երվանդ Պողոսյանին:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

14 մարտ, 2024 թվականի
ք. Երևան